ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

N_____ "_____" _____ 2017 թ.

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման
նախարարի առաջին տեղակալ, հողերի օգտագործման
ժամանակավոր սխեմաների համաձայնեցման
միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ
պրն Վ. ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Տերտերյան

Ի պատասխան Ձեր 2016 թ. դեկտեմբերի 20-ի N 03/16.1/5766-16 և ի լրումն մեր 2016 թ. դեկտեմբերի 26-ի N 03/14.2/6707-16 գրությունների՝ հայտնում ենք, որ նախարարությունը չի առարկում ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայով համայնքի վարչական սահմաններում գտնվող, «Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,28619 հա պտղատու այգու և 0,82566 հա վարելահողերի նպատակային նշանակության փոփոխությանը:

Միաժամանակ, հաշվի առնելով հիշյալ հողակտորներից մեկի մոտակա տարածքներում դամբարանների առկայությունը՝ նախարարությունը անհրաժեշտ է համարում աշխատանքների ընթացքին հնագետի ներկայության ապահովումը, ինչպես նաև այդ տարածքներում հնարավոր այլ դամբարանների անխաթարությունն ապահովելու նպատակով համապատասխան պայմանագրի (պարտավորագիր) կնքումը:

Հարգանքով՝ Ա. ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

ՊՄՀՊ գործակալություն
Կատ.՝ Ս. Շաքարյան
Հեռ.՝ 011 565 118

0010, Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, Հեռ./Тел./Tel.: (010, 011) 52 93 49, ֆաքս/факс/fax (374 11) 52 39 22,
0010, Ереван, ул. Вазгена Саргсяна 3, Дом правительства 2, Government House 2, Vazgen Sargsyan str. 3, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am